Բարև՛, նույն գաղափարախոսությունն ինձ հետ կիսող մա՛րդ,

Իմ անունը Նառա է: Մենք, գուցե, հասակակիցներ ենք: Գուցե, մեր մտածելակերպն ու մտքերը նույնպես նույնն են: Այս նամակը քեզ գրելու նպատակս հայտնի է. այն միայն մեկ անուն ունի՝ «Խաղաղություն»: Մենք քեզ հետ նույն գաղափարի շուրջ ենք միավորվում: Արդյոք չի՞ կարող լինել, որ միլիոնավոր մարդիկ այդ գաղափարի շուրջ միավորվեն: Դու դա չե՞ս ցանկանա: Ես ամենից շատ ու բոլորից շատ դա եմ ցանկանում: Չէի ցանկանա անդրադառնալ անցյալին, կցանկանայի ավելի շատ նայել դեպի առաջ ու դեպի ապագա, սակայն դա մոռանալ հնարավոր չէ: Երկուսիս հիշողությունների մեջ էլ դառը հուշեր և հետքեր կան: Սակայն մենք կարող ենք գործել, որ մեր ապագան այդպիսին չլինի: Քո կարծիքով այդպես չ՞է: Արդյո՞ք դա մեր ձեռքերում չէ: Կարո՞ղ ենք արդյոք միլիոնավոր մարդկանց գթության, մարդասիրության, խիզախության ու քաջության կոչ անել: Քանի այդ հավատը կա մեր մեջ, մենք ամեն ինչ կարող ենք: Խաղաղություն բառը բոլորի համար 10 տառից է բաղկացած, սակայն շատ քիչ մարդ գիտի, թե որքան դժվար է այն, և որն է դրա նպատակը: Դու չէի՞ր ցանկանա ապրել երջանիկ, բարեկեցիկ, խաղաղ ու հանգիստ մի աշխարհում:

Հոսող արցունքներ, հառաչանք ու կսկիծ, կորուստ, թախիծ ու ատելություն, սա՞ ես ցանկանում, թե՞ ծիծաղաշատ դեմքեր, փայլող աչքեր ու սեր: Ես հրավիրում եմ քեզ դեպի այս գեղեցիկ զգացմունքները և, որ ամենակարևորն է, խաղաղության կոչ եմ անում: Մենք խաղաղությամբ կգեղեցկացնենք մեր աշխարհը, ես վստահ եմ:

Հարգանքներով՝

Խաղաղություն կամեցող մի աղջիկ

Նառա